[redacted]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
դատավոր՝ Ռ.Վարդազարյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
դատավոր՝ Լ.Հովհաննիսյան

18 ապրիլի 2025 թվական քՔերևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դտարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ ոստիկանության [redacted] 2018 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ միջնորդել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ թույլատրել գաղտնալսել և ձայնագրառել [redacted] կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարից կատարվող խոսակցությունները՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ վերոնշյալ միջնորդությունը բավարարվել է:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2023 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ մեղադրյալ [redacted] պաշտպան Զ.Սակովայի վերաքննիչ բողոքը բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշումը բեկանվել է, իսկ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու մասին ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդությունը՝ մերժվել:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Մասնավորապես, բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածը և արդյունքում կայացրել է անօրինական և չհիմնավորված որոշում:

Բողոքաբերը նշել է, որ իրավասու պաշտոնատար անձը, ենթադրյալ հանցագործության վերաբերյալ տվյալներ ստանալու համար այլ արդյունավետ միջոցների բացակայության պայմաններում, օրենքով սահմանված կարգով դատարան է ներկայացրել օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդություն, որն էլ իրավացիորեն բավարարվել է Առաջին ատյանի դատարանի կողմից, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման հիմքերի ապացուցողական սանդղակի ավելի ցածր լինելը, ինչպես նաև այդ գործունեության առանձնահատուկ բնույթը, դրանք գնահատել է առավել բարձր չափանիշի տեսանկյունից՝ արդյունքում կայացնելով անհիմն դատական ակտ՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդությունը մերժելու մասին:

5.1. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել և որևէ կերպ չի գնահատել նաև այն հանգամանքը, որ ենթադրյալ կատարված ծանր հանցագործության կապակցությամբ ստացված օպերատիվ տեղեկությունը «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ոչ միայն չի հերքվել, այլ, ինչպես այդ միջոցառմամբ, այնպես էլ արդեն հարուցված քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով հաստատվել է, ինչի արդյունքում թիվ [redacted] քրեական գործն ըստ մեղադրանքի [redacted]՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 28-ի որոշումը և Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշման դեմ պաշտպանի ներկայացրած բողոքը մերժել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդության համաձայն՝ *«ՀՀ ոստիկանության՝ կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ* [redacted] *(...) ապօրինի ձեռք է բերում տարբեր տեսակի թմրամիջոցներ և այն իրացնում տարբեր անձանց: Վերջինս իր հանցավոր գործունեությունն իրականացնում է* [redacted] *բջջային հեռախոսահամարի միջոցով: Նշված արարքը հնարավոր է համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:* [redacted] *կողմից օգտագործվող նշված հեռախոսահամարի վերահսկումը կնպաստի պարզաբանել վերջինիս կողմից թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը, իրացման մեխանիզմը և նրա հանցակիցներին (...)»*[1]:

8. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Քննելով միջնորդությունը, ուսումնասիրելով գործի նյութերը և լսելով ՀՀ ոստիկանության՝* [redacted] *, դատարանը գտավ, որ միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ դրա արդյունքում կարող են տեղեկություններ ստացվել ծանր հանցագործությունների վերաբերյալ»*[2]:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություն պարունակող՝ Առաջին ատյանի դատարան ներկայացված որոշմանը պետք է կցվեն բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը: Մինչդեռ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանից պահանջված և ստացված նյութերում առկա է միայն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու*

---

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 2:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 6:

միջնորդություն հարուցելու մասին ՀՀ ոստիկանության [redacted] որոշումը, դատական նիստին մասնակցելու վերաբերյալ լիազորագիրը, դատական նիստի պարզ թղթային արձանագրությունը և Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը: Վերաքննիչ դատարանը, ՀՀ ոստիկանության [redacted] պահանջելով միջնորդությունը հիմնավորելու համար Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը, ի պատասխան ստացել է միայն «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդությունը, «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն ստանալու մասին որոշումը գաղտնազերծելու վերաբերյալ միջնորդությունը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ բացառությամբ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդության, «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն ստանալու մասին որոշումը գաղտնազերծելու վերաբերյալ միջնորդության, որևէ փաստաթուղթ, որն Առաջին ատյանի դատարանը վերադարձրել է միջնորդություն ներկայացրած անձի ներկայացուցչին, չի ներկայացվել:

Այս առումով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ օպերատիվ մարմնի միջնորդությունը, որքան էլ այն փաստարկված լինի, պետք է հիմնավորվի միջնորդությանը կից և/կամ նիստի ժամանակ դատարան ներկայացվող նյութերով, որոնց ստուգման և գնահատման արդյունքներով է հնարավոր հանգել դրա իրականացման անհրաժեշտության մասին հետևության:

Վերաքննիչ դատարանը նաև արձանագրում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդությունը քննող Առաջին ատյանի դատարանը կաշկանդված չէ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմնավորում ներկայացված նյութի ծավալով, իրավունք ունի, իսկ հիմնավորված և

պատճառաբանված դատական ակտ կայացնելու համատեքստում նաև պարտավոր է պահանջել դատարան ներկայացնել միջնորդությունը հիմնավորող բավարար նյութեր, փվյալներ և միայն մերժում ստանալու պայմաններում իրեն հասու դարձած ողջ նյութի հետազոտման և դրանով հիմնավորվող հանգամանքների գնահատման արդյունքում կայացնել օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ այդկերպ միայն հնարավոր կլինի երաշխավորել ինչպես շահագրգիռ կողմի՝ հիմնավորված դատական որոշման իրավունքը, այնպես էլ որոշման իրավաչափության արդյունավետ դատական ստուգման հնարավորությունը: Նույն կերպ, եթե դատական վերանայումն իրականացվի դատական ակտը կայացրած դատարանի կողմից չհետազոտված նյութերի հիման վրա, ապա վերադաս դատական ատյանի որոշումն ըստ էության չի համապատասխանի դատական ակտերին ներկայացվող օրինականության և հիմնավորվածության պահանջներին՝ հանգեցնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի խախտման:

Հետևաբար, հաշվի առնելով, որ միջնորդությունը հիմնավորող նյութերն Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել, ինչպես նաև Առաջին ատյանի դատարան ներկայացված գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա փաստելով, որ Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել հիմնավորումներ առ այն, որ այլ եղանակով, քան անձի հաղորդակցության ազատության և գաղտնիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքների նկատմամբ միջամտություն է, օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է, Վերաքննիչ դատարանը վերոգրյալ վերլուծությունների և դատողությունների արդյունքներով արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա՝ հանգեցնելով [redacted] *հաղորդակցության ազատության և գաղտնիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքների անհամաչափ սահմանափակման»*[3]*:*

---

[3] Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 62-74:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «*Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով*»:

Վերոգրյալից հետևում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Հետևաբար, սույն բողոքի քննությունն իրականացնելիս որպես Վճռաբեկ դատարանում բողոքի քննության ընթացակարգ հիմք է ընդունվում 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը քննության է առել, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի հետևությունների իրավաչափությունը գնահատել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում, ուստի ստորադաս դատարանների հետևությունների իրավաչափության գնահատման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները:

11. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ [redacted] նկատմամբ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն իրավաչափ չէ:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:*

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:*

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգիրք) 278-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները (...)»:*

ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ:*

2. Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով»:

ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ:*

2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն է տալիս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը:

3. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու համար հիմք է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի պատճառաբանված որոշումը, որում պարունակվում է միջնորդություն՝ այդ միջոցառումների իրականացման թույլտվություն ստանալու վերաբերյալ: Որոշման մեջ նշվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, միջոցառման իրականացման տեղը և ժամկետը, ինչպես նաև այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են դատարանին՝ որոշում կայացնելու համար: Որոշմանը կցվում են բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը: Որոշումը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից:

(...)

5. Դատավորի պահանջով նրան են ներկայացվում նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող այլ նյութեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կա պետական կամ ծառայողական

գաղտնիքի խախտման վտանգ կամ, երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հատուկ գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, համապատասխան տեղեկությունների ստացման աղբյուրները և դրանց ստացման եղանակները: Օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու հիմքերի բավարար լինելն ստուգելու նպատակով դատավորը կարող է համապատասխան պաշտոնատար անձից պահանջել բացատրություններ և լրացուցիչ նյութեր:

6. Հարցի քննարկման արդյունքներով դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու՝ թույլտվություն տալու կամ միջնորդությունը մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը: Համապատասխան նյութերը դատարանը վերադարձնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին (...)»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի միջնորդությունը ներկայացվելու ժամանակ գործող խմբագրությամբ (այսուհետ՝ Օրենքի) 14-րդ հոդվածի համաձայն՝

«Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները.

1) (...).

12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում.

(...)»:

Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է (...)»:*

Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ*

եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները (...) կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ»:*

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ բավարարվել է ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդությունն ու թույլատրվել՝ 2 (երկու) ամիս ժամկետով [redacted] նկատմամբ իրականացնել «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը[4],

- [redacted] պաշտպան Զ.Սակովան վերաքննիչ բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ, որը Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանվել է, իսկ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու մասին վերոնշյալ միջնորդությունը՝ մերժվել[5],

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություն պարունակող՝ Առաջին ատյանի դատարան ներկայացված որոշմանը պետք է կցվեն բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը, մինչդեռ Առաջին ատյանի դատարանից ստացված նյութերում առկա է միայն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին ՀՀ ոստիկանության [redacted] որոշումը, դատական նիստին մասնակցելու վերաբերյալ լիազորագիրը, դատական նիստի պարզ թղթային արձանագրությունը և

---

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին և 2-րդ կետերը:
[5] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ ՀՀ ոստիկանությունից պահանջելով միջնորդությունը հիմնավորելու համար Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը, ի պատասխան ստացել է «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդությունն ու «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն ստանալու մասին որոշումը գաղտնազերծելու վերաբերյալ միջնորդությունը: Արդյունքում արձանագրելով, որ միջնորդությունը հիմնավորող նյութերն Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել, ինչպես նաև գտնելով, որ Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել հիմնավորումներ առ այն, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա՝ հանգեցնելով [redacted] հաղորդակցության ազատության և գաղտնիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքների անհամաչափ սահմանափակման[6]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-րդ կետերում մեջբերված իրավադրույթների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը իրավաչափ չէ, չի բխում միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարան ներկայացված փաստական տվյալների բովանդակությունից, որոնք իրենց համակցության մեջ գնահատելու պարագայում Վերաքննիչ դատարանի համար ակնհայտ կդառնար «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն տալու որոշման փաստական հիմքի բավարարությունը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու

---

[6] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

անհրաժեշտությունը հիմնավորող տվյալները չեն կարող լինել նույն մակարդակի, ինչպիսիք անհրաժեշտ են մեղադրանք առաջադրելու կամ անձին դատապարտելու համար: Ուստի հարկ է նկատի ունենալ, որ այդ փուլում տվյալի գնահատման չափանիշներին ներկայացվում են ավելի ցածր պահանջներ, քան անձի մեղավորության հարցի լուծման ժամանակ ապացույցների գնահատմանը:

15. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն պնդմանը, որ Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել հիմնավորումներ առ այն, որ այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Այս առումով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, համաչափության սկզբունքի պահպանման տեսանկյունից անդրադառնալով հիշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման իրավաչափությանը, պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել առկա փաստական հանգամանքները, մասնավորապես՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի տրամադրության տակ [redacted] կողմից ծանր հանցանքի կատարմանը ենթադրյալ առնչության հիմք տվող տեղեկատվությունը, ենթադրյալ հանցավոր սխեմայի մասին փաստական տվյալների առկայությունը, հարուցված քրեական գործի բացակայությունը:

Իրավասու մարմնի վերոնշյալ միջնորդությունը մերժելու հիմքում դնելով այն ընդհանրական և չպատճառաբանված դատողությունը, թե այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին լինելու մասին հիմնավորումներ չեն ներկայացվել՝ Վերաքննիչ դատարանը չի հստակեցրել և որևէ ողջամիտ փաստարկ չի ներկայացրել առ այն, թե ի՞նչ այլ եղանակով էր հնարավոր անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը, ի՞նչ ավելի մեղմ միջոցի կիրառմամբ էր հնարավոր հասնել ենթադրյալ հանցավոր արարքի բացահայտմանը:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ավելի նվազ միջամտությամբ (այլ միջոցներով) ցանկալի նպատակի հասնելու անհնարինությունն ապացուցման այլ չափանիշ ունի քրեական գործի նախաքննության ընթացքում և այլ ապացուցողական չափանիշ ունի քրեական վարույթի բացակայության դեպքում, երբ մինչև քրեական վարույթ նախաձեռնելը,

օպերատիվ տվյալի առկայության պայմաններում իրավասու մարմինը միջնորդում է իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառում:

Հարկ է ուշադրություն դարձնել, որ այս առումով ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ դատավորի պահանջով նրան են ներկայացվում նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող այլ նյութեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կա պետական կամ ծառայողական գաղտնիքի խախտման վտանգ կամ, երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, համապատասխան տեղեկությունների ստացման աղբյուրները և դրանց ստացման եղանակները:

16. Ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավասու պաշտոնատար անձը ենթադրյալ հանցագործության վերաբերյալ տվյալներ ստանալու համար այլ արդյունավետ միջոցների բացակայության պայմաններում օրենքով սահմանված կարգով դատարան է ներկայացրել օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդություն, որն էլ իրավացիորեն բավարարվել է Առաջին ատյանի դատարանի կողմից, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերի ապացուցողական սանդղակի ցածր լինելը, ինչպես նաև այդ գործունեության առանձնահատուկ բնույթը, այն գնահատել է առավել բարձր չափանիշի տեսանկյունից՝ արդյունքում կայացնելով անհիմն որոշում:

17. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ [redacted] նկատմամբ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը ոչ իրավաչափ համարելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

18. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն վարույթով դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել ՀՀ նախկին

քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են վարույթի ելքի վրա, ինչպես նաև հանգեցրել են վարույթի հանրայնության սկզբունքի խախտման, ինչը, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 362-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, ՀՀ ոստիկանության [redacted] միջնորդությունը բավարարելու վերաբերյալ որոշումը կայացնելիս, թույլ չի տվել վարույթի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

[redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմանը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ